




ՊԻՈՆ ՀԱԿՈՒՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

«...զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»
(Մատթէոս, Ի, 16):

Ընտրյալները միշտ էլ սակավաթիվ են: Ամբողջ կյանքում ապրում, խորհում, տառապում են ազգի ու հայրենիքի համար՝ մնալով նախանձելի անանձնական ու անթերի բարոյական: Երկնային շնորհները, որոնք ի հայտ են գալիս նրանց մեջ վաղ տարիներից, չեն մղում երբեք փառքի ու երանության կամ գայթակղում երկրային վայելքներով: Ընդհակառակը, մշտապես տրամադրում են տքնության ու արարման, ինքնամաքման ու կատարելության՝ աշխարհին ու մարդկանց պարզ հայացքով նայելու, բարություն ու արդարություն ցանելու համար:

Նրանք հառաջադիմության ու վերաշինության գինվորյալներն են՝ մանուկների սիրելի ուսուցիչները դպրոցներում, և օրինակելի հովիվներն ու բաղձալի քարոզիչները եկեղեցիներում, հրապարակային թեժ պայքարների բովում թրծված համազգային դաստիարակներ և հանրային մտքին ուղղություն տվողներ, մի խոսքով՝ իսկական առաքյալներ... Ինքնանվիրումը ցուանում է նրանց առօրյա գործունեության յուրաքանչյուր դրսևորումից. նրաց կատարած յուրաքանչյուր քայլից, նրանց արտասանած յուրաքանչյուր բառից...

Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջինն այդ ընտրյալներից է:

Նախ նա հայտնի դարձավ որպես հրապարակագիր ու գիտնական և հետո նոր՝ հոգևորական:

Երկու շրջանի կարելի է բաժանել Վեհի ցարդ ծավալած հանրային և գիտահետազոտական գործունեությունը: Մեկը սուաջին հոդվածները լույս

տեսնելու տարիներից, այսինքն՝ 1933-ից մինչև 1950-ական թթ. կեսերը, երբ նա տակավին ստեղծագործում էր սփյուռքում, և մյուսը՝ 1955-ից առ այսօր, երբ իր անապատ եռանդով ու փորձառությամբ ընթացք է տալիս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործերին, իբրև նրա 130-րդ Հայրապետը:

Առաջին շրջանում մեր Ընտրյալը, առավելապես դեռ աշխարհական և իր մկրտության անուն-ազգանունով՝ Լևոն-Կարապետ Պալճյան, նախ շարունակում էր ուսումնառությունը Բուքրեշի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում, որ տևում է չորս տարի, 1932—1936 թթ., ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով հոգեբանության, մանկավարժության և հասարակական գիտությունների վրա, զուգահեռաբար, մասնավոր դասերի միջոցով, հաղորդակից դառնալով նաև դասական հայրենի գաղտնիքներին՝ անմասն չմնալու համար հայոց հին ու միջնադարյան մատենագրության գանձերից: Վերջին շրջանում, մեկ ուսումնական տարի էլ, 1936-ի մարտից, հաճախում է համալսարանին կից Տիտու Մալորեսկուի անվան փորձառական մանկավարժական ինստիտուտը և ավարտում այն ևս՝ առավել խորանալով տվյալ բնագավառում:

Այսօրինակ համակողմանի նախապատրաստությունից հետո միայն Լ. Կ. Պալճյանը մտնում է կյանք՝ որպես հանրային կրթության և հրապարակային գործունեության անխոնջ աշխատավոր, որպես իմաստասեր ու հետազոտող, որի գիտական հետաքրքրությունները ծավալվելով՝ ավարտուն տեսք էին ստանում ուսանողական միության հավաքներին կարդալիք դասախոսությունները և իր իսկ խմբագրած «Հերկ» երիտասարդական հանդեսի հերթական համարների նյութերը պատրաստելու ընթացքում:

Բեղուն էր առաջին տարիների հունձը: Կարճ ժամանակամիջոցում իրար են հաջորդում թեպետ ո՛չ սովար, սակայն բովանդակությամբ հարուստ և շարադրանքով միանգամայն ինքնուրույն ու ինքնատիպ նրա գրքերը՝ ըստ ամենայնի նախորդը չունեցող մեր իրականության մեջ: 1943-ից սակայն, երբ փոխվում է Լ. Կ. Պալճյանի կյանքի ուղին ու գործունեության դաշտը, մինչև նա դառնում է կուսակրոն արեղա և երկամյա նոր ուսումնառությամբ տեղի համալսարանում լրացնում գիտելիքները աստվածաբանությունից, ապա՝ նշանակվում նախ ումինահայ, իսկ հետո էլ բուլղարահայ հոգևոր թեմերի առաջնորդ, գրեթե արդեն ժամանակ չի ունենում սկսել ու ավարտել գիտահետազոտական նոր աշխատություններ: Հայրենի գիտությունը դրանով կորցրեց իր ամենաինքնատիպ և խորաթափանց աշխատավորներից մեկին, իսկ Հայաստանյայց Եկեղեցին մեծապես շահեց, որովհետև վերջինիս պատմության մեջ շատ չեն իսկական գիտնական հայրապետները և լայնախոհ ու հառաջիմաց մտածողները:

Հետևաբար, մեր քննության առարկան գլխավորապես աշխարհական Պալճյանի 1930-ական թթ. վերջերին և 40-ականների սկզբներին հայ սփյուռքում, բացառապես Բուխարեստում գրած ու հրատարակած գիտական աշխատություններն են, որոնց բոլորին ուժ ու կենդանություն է տալիս մի վեհ, տիրական ոգի, որոնք բոլորն ունեն ոճի, հայեցության և նպատակաուղղվածության միասնություն ու բոլորն էլ գրված են զուսպ ու խիտ խոսքով, սերնետաքններից միանգամայն գերծ, անթերի արևմտահայերենով:

Գրքերից առաջինը թվագրված է «հոկտ. 1938», և առնչվում է իմաստասիրական-հասարակագիտական այնպիսի հարցերի, որոնք մարդկային միտքը հուզում էին արդեն քանի՜ դար, ֆրանսիացի լուսավորիչների ժա-

մանակներից սկսած՝ չարժանանալով գոհացուցիչ լուսաբանման: «Անձնավորության գաղափարի մասին» խորագիրը և «մոսածումներ» ենթավերնագիրն ունի այդ հետազոտությունը, որ սկզբնապես լույս է տեսել Բուխարեստի «Գաղութահայ տարեգրքում», 1938-ին, իսկ նույն տարի արտատպվել նաև առանձին գրքով՝ արդեն վաղուց դառնալով բաղձալի ու անգնահատելի մատյան: Ծիշտ է, ավելի վաղ, 1935-ի երկրորդ կեսին և հաջորդ տարվա սկզբներին Լ. Կ. Պալճյանը պատրաստել էր «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» խորագրով մի դիսերտացիոն աշխատություն, այն էլ ո՛չ հայերեն, այլ ռումիներեն, և ներկայացնելով Բուխարեստի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի հանձնաժողովին, ինչպես նաև բարձր միջերով հանձնելով պահանջվող քննությունները՝ լիցենցիատի (մեր ըմբռնումով՝ մագիստրոսի) տիտղոսով ավարտել այն («Diploma de Licenta», No. 4798, տրված 17 հունիսի 1936 թ.): Բայց այդ աշխատությունը հրատարակված չէ, ու բովանդակությունն էլ մեզ ծանոթ չէ, հետևաբար բնավ սխալված չենք լինի, եթե մեր քննությունն սկսենք արդեն հիշված «Անձնավորության գաղափարի մասին» իմաստասիրական մոսածումներից, որոնցով հեղինակը առաջին անգամ ներկայացավ սփյուռքի ու հայրենիքի գրական շրջաններին*:

2

Լուսավորիչները թեպետև առաջիններից մեկը հռչակել են անհատի ազատության իրավունքը՝ բանաձևված Ժան Ժակ Ռուսոյի նշանավոր աշխատության՝ «Հասարակական դաշինքի» հենց առաջին տողում. **«Մարդը ծնվում է ազատ»**, սակայն, ըստ երևույթին, մարդ-անհատը նրանց համար տակավին անըմբռնելի արարած էր: Ինչպես նկատում է մեր հեղինակն էլ՝ իրապես այդ **մարդուն** նրանք չէին էլ տեսնում, այն նրանց համար գոյություն իսկ չունեի, «ան վերացական մարդն էր», մարդու ընդհանուր գաղափարը, «որ տրամաբանությամբ կառուցեր էին քանի մը երազապաշտ մրտածողներ», մինչդեռ ճիշտ հայեցակետը մարդուն իբրև անձնավորություն դիտելն ու քննելը պիտի լինեի, մանավանդ, որ մարդն երկար դարերի ծանր ու դժվարին ճանապարհ անցնելուց հետո միայն ջանում էր հասնել ինքնաճանաչման, իր «ես»-ի զգացման գիտակցմանը՝ տակավ առ տակավ ձերբազատվելով **հավաքական** ես-ի զգացումից և ձգտելով գտնելու իր տեղը հանրության մեջ: Մարդն անվերջ պարապում էր ինքնաքննությամբ, որոնում ինքն իրեն, իր անձնավորությունը, որ բնության իրականություններից միսն է և նպատակներից բարձրագույնը՝ «գոյության բարձրագույն գագաթը» (36): Որքան էլ անհավատալի, այնուհանդերձ անվիճելի է, որ լուսավորիչներից շատ ու շատ հետո միայն, իմաստասերներն զգում են, որ անհատը ո՛չ միայն չի հասել ու չի կարողանում հասնել ազատության, այլև, ընդհակառակը, հենց ազատություն որոնելու ճանապարհին այլասերվում է աստիճանաբար, որի պատճառը, ամենայն հավանականությամբ, մարդ-

* Լ. Կ. Պալճյանի այս գրքի վաճառքի մասին հայտարարություն է տպագրվել Փարիզում լույս տեսնող՝ Հ. Բալույանի «Զվարթնոց» ամսօրյա գրաթերթում (տե՛ս Բ տմարի, թիվ 8, ապրիլ 1, 1939, էջ 64, պլուն 1):

անհատի՝ իր բուն միջավայրից, իր օրգանական հոգեկան աշխարհից, վերջապես՝ այն հավաքականությունից, որին անմիջականորեն պատկանում էր ինքը, աննկատելիորեն հեռանալու, արմատախիլ լինելու մեջ է:

Հետևաբար, անհատի ազատությունը չէ, որ պիտի լինի կյանքն ու աշխարհը վերափոխողների նպատակը, որովհետև անհատն ինքն իր մեջ և ինքն իր համար, իր ներքին ազատության մեջ թողնված՝ դատապարտված է այլասերման, այլ անձնավորության ազատությունը՝ հավաքականության սահմանների մեջ, որովհետև անձնավորությունը մարդու հոգին է, նրա **ես**-ի կատարելագործված վիճակը: Այս իմաստով էլ Վեհափառը մեկնաբանել է Գյոթեի խորհմաստ ասույթը.

«Nur das Gesetz kann uns Freiheit geben»

(«Միայն օրենքը կրնա մեզի ազատություն տալ»)**

(էջ 38)

Արդեն ութսունամյա հասակում, շարունակելով խորհրդածել մարդու դերի ու կոչման շուրջ, Վեհը նկատում է. «Մարդկային բնությունը տատանման հսկայական լայնություն ունի: Մարդը կարող է մեծ վերելք և խոր անկում ունենալ: Գեղարվեստական մեծ ստեղծագործություններում այդ լավ է երևում: Մարդը հակասական է, փոփոխական: Հոգևոր ուժ է պետք՝ հավասարակշռելու մարդու բնությունը: Եվ իմ կարծիքով՝ հավատն ունի այդ ուժը: Ես կարծում եմ, որ Քրիստոսի ուսմունքը կարող է օգնել ժամանակակից մարդուն ինքնակարգապահություն դաստիարակելու հարցում: Պետք չէ ազատությունը հասկանալ որպես ձերբազատումն ամեն կրգի սահմանափակումներից ու նորմերից: Պետքուս առաքյալը այսպիսի միտք ունի. ապրեցե՛ք որպես ազատներ և ազատությունը իբրև չարիքի պատրվակ մի բռնե՛ք («Իբրև զազատս լինել, և մի՛ իբրև պատրուակ չարութեան ունել զազատութիւնն» (Պետքոս, Ա Կաթողիկէ, Բ, 16))***:

Մարդ անհատի կյանքն ու աշխարհն են կազմում իր ապրած բնականվայրը, ցեղը, որին պատկանում է, ոգին, պատմությունը և մշակույթը, որոնցով սնվում է նա: Փոխվում են այս բոլորը, փոխվում է նաև մարդը, ու հայ մարդը, և բռնում օտարացման ճանապարհը. «Անոնք,—նկատում է մեր հեղինակը...—նոր միջավայրի մը ու մթնոլորտի մը մեջ փոխանակ իրենց հոգիին մեջ պահելու հայրենի, ցեղային մթնոլորտը, որ բնական ու հարազատ է իրենց, և ապրելու անոնց մեջ, կուգեն օտար կյանքը և օտար հոգին ընդօրինակել ու փոխադրվիլ այդ «նոր» իրականությանց» մեջ (էջ 39—40), որի հետևանքով օտարացումն ու այլասերումն անխուսափելի է: Հետևաբար «Անհատի ազատագրում, **ես**-ի ազատագրում ըսելով՝ պետք է հասկնալ գիտակցականացումը և բանականացումը այն հարաբերությանց, որ կան անհատի ու ընկերության միջև և բնավ երբեք խզումը այդ կենսաբանական, հոգեբանական և ընկերաբարոյական կապերուն» (էջ 41): Մեծ նշանակություն է տալիս հեղինակը հստակապես անհատի ինքնաճանաչմանը, եթե միայն այն ընթանում է ճիշտ ճանապարհով և չի վերանում ինք-

** Տակավին անտիպ գրառումների մեջ (1976 թ.) սույն եզրահանգումն ստացել է ավելի հղկուն կերպարանք. «Մարդ լինել՝ նշանակում է ազատ լինել: Ազատ լինել՝ նշանակում է հպատակվել բարոյական օրենք(ներ)ին ազատ կամքով» (ինքնագիրը՝ «Մտածումների» աշխատանքային օրինակի վերջում, մեր հավաքած նյութերի մեջ—Պ. Հ.):

*** Տե՛ս Վազգեն Ա., Աշխարհի բարօրությունը մարդկանց միասնությունն է: — ԱՊՆ-ի հրատ., Մոսկվա, 1988, էջ 15 (սրբագրված է ըստ ռուսերեն տարբերակի—Պ. Հ.):

ճակեղծման, այսինքն՝ անհատին չի մղում այլասերման ու կործանման: Այս դեպքում էլ մեր խորագետ հետազոտողը նշմարում է փրկության ուղիներ, գլխավորապես ճիշտ դաստիարակությունը և գրական անմահ կերպարների օրինակը, ինչպիսիք են՝ Էդիպոս արքան, Կարամազով եղբայրները և Ֆաուստը, որոնք անհատին տրամադրում են ինքնաճանաչման, ինքնաքննադատության և ինքնակերտումի: Նրանցից առաջինն ի վերջո ենթարկվում է ճակատագրին, երկրորդը համառորեն որոնում է փրկություն, իսկ վերջինը իրականացնում է իր երազանքը. «Ֆաուստը մարդն է, որ կը պայքարի ճակատագրին ու ինքզինքին դեմ: Ֆաուստը մարդկային գիտակցության և կամքի ուժերու միջամտության հաղթանակն է: Ան ինքզինքեն դուրս կելլե ու հասարակաց բարիքին մեջ, ընկերության երջանկության մեջ կը գտնե փրկություն» (43):

Աշխատության եզրափակիչ էջերում քննության են առնվում հավաքականություն և անհատականություն իմաստասիրական եզրույթների ներքին կապերն ու առնչությունները և խոսուն օրինակների վկայակոչմամբ ցույց տրվում, որ իրականության մեջ խիստ բարդ են այդ փոխհարաբերությունները. ո՛չ հավաքականությանը սովորական ձևով տրոհելով կարող ենք ստանալ անհատականություններ, ո՛չ էլ անհատների մեխանիկական գումարից կարելի է ստեղծել հանրություն, որովհետև, ինչպես գրում է հետազոտողը, յուրաքանչյուր առանձին դեպքում հանրությունն իր հերթին և անհատականությունն՝ իր, ունեն ընդգծված ու յուրահատուկ բովանդակություն. մի դեպքում՝ տվյալ ազգության առանձին անհատներ, և մյուս դեպքում՝ տվյալ ժողովրդի ազգային բնավորություններ, որ կարող են շոշափելի տարբերություններ ունենալ: «Անհատական հոգիները հավաքվելով, իրար թափանցելով, ձուլվելով՝ ծնունդ կու տան գոյության մը, հոգեկան էթե կուզեք, որ, սակայն, նոր տեսակի անհատականություն մը կը ներկայացնե: Ուրեմն ա՛յս հավաքական անհատականության մեջ և ո՛չ թե անոր բաղկացուցիչ միավորներուն մեջ պետք է փնտռենք անմիջական ու պայմանավորող պատճառները այն երևույթներուն, որ հառաջ կու գան այդ հավաքականության մեջ: Հավաքականությունը կը մտածե բոլորովին այլ կերպ, քան իր անդամները առանձին-առանձին առնված» (էջ 48): Այսպիսի անհատներն են, որ իրավունք են նվաճում «անձնավորություն» կոչվելու:

Անձնավորություն կարող են դառնալ ո՛չ թե բացառիկ օժտված անհատները, այլ այնպիսի մարդիկ, որոնք ունեն նկարագիր՝ կամքի ուժ, դատողության հստակություն, զգացումի նրբություն և ոգևորվելու կրակ՝ հենց դրանցով էլ մեծապես ծառայելով իրենց հայրենիքին ու հայրենի մշակույթին. այս է հեղինակի վերջնական եզրակացությունը՝ թարմ ու ուշագրավ:

Արդեն առաջին ուսումնասիրության մեջ երևում էին բոլոր նախանշանները նրբազգաց ու սրատես գեղագետ-բանասերի, որի հետաքրքրասիրություններն ավելի ու ավելի ծավալվելով՝ վերաճում էին գրական-պատմական քննության «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» խորագրով «վերլուծական փորձի» մեջ, հրապարակ հանված այս անգամ, հենց սկզբից, առանձին գրքով, 1940-ին, դարձյալ Բուքրեշում:

Հեղինակին այսօրինակ «վերլուծական փորձի» պարտադրողը կյանքն ու իրադրություններն էին, որոնց մեջ նա ապրում ու հասակ էր առնում: Գաղտնիք չէ, որ Մեծ եղեռնի հիշողությունները հայ մարդու սրտի և հայրց պատմության տարեգրության ամենացավոտ տեղերն են: Նրանք փոթորկվում են հայի, առավելապես աղետից հրաշքով վերապրած տարագիր

հայի հոգում ու մտքում նրա գիտակցական կյանքի ողջ ընթացքում, անկախ նրանից՝ հետևանքը կամ արդյունքն ինչ է դառնալու. սերունդներին փոխանցվող սահմուկեցուցիչ զրոհ, քնարական գողտրիկ պատոհմ, եղերեհ, թե՛ ճակատագրական անցքերի ու դասերի հրապարակային վերագնահատման փորձ:

Հիշյալ բոլոր առումներով էլ Լ. Կ. Պալճյանն աննկատելիորեն արագացնում էր իր գալիք գիտահետազոտական մտահղացման արարման ժամը:

Այս էլ ասենք, որ հայրենիքի կորստյան անամոք վիշտը թեպետև շարունակում էր ծխալ հայի հոգում, բայց և, միաժամանակ, առավել սթափներից պարտադրում էր որոնել երեկվա անցքերի բուն պատճառները՝ նրանց դասերի անկանխակալ քննության և իմաստավորման ճանապարհով, այսուհետև նույնպես, թեկուզև հյուրընկալ, բայց դարձյալ օտար հողմերի քերանում դիմակայելու և հայ մնալու համար:

Ֆրանց Վերֆելի վեպն այդ առումով բուժիչ սպեղանի էր հիշեցնում: Օտարի աչքն ավելի անսխալ էր նշմարում մեր առաքինություններն ու արատները, մեր սխրանքներն ու ճակատագրական սխալները, եթե ինչ-ինչ հանգամանքների թելադրանքով գործել էինք ու թանկ հատուցել...

Հիշենք և այս, որ Եղեռնից հետո, մի կարճ ժամանակ, ճակատագիրը, կարծես, բարեհաճ եղավ հայոց հանդեպ. անմեղների ծով արյունն իզուր չթափվեց. ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը, հայոց մեր ժամանակների առաջին անկախ պետականությունը, որն երկուսուկես տարի հազիվ գոյատևելուց հետո, ի վերջո, հարկադրված էր տեղը զիջել Խորհրդային կարգերին: Սրանք էլ հարկադրեցին տարածքային նոր զիջումներ անել թուրքերին, իսկ երկրով մեկ ծավալվեց կարմիր տեռորը: Ո՞վ էր արդարև և ո՞վ՝ մեղավորը, ինչպիսի՞ն կլինեին մի բուն հայության վաղվա օրը ուս տերության տակ... Ահա՛ հարցերի մյուս խումբը...

Վերֆելի վեպը հնարավորություն էր տալիս խորանալու այս հարցերի մեջ ևս, իսկ եզրահանգումներ անելիս, որքան կարելի է, խուսափել հուզախոով դրդապատճառների պարտադրանքներից:

1936-ի սկզբներին ապագա աշխատությունը մասամբ արդեն գրված էր, և Բուքրեշի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու գավթում գումարված՝ Հայոց ուսանողների միության հերթական նիստում Լ. Կ. Պալճյանը հանդես եկավ «Ֆրանց Վերֆելը և նրա «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը» զեկուցումով, չշտապելով, սակայն, պատրաստ մասերը տպագրության հանձնել: Որոշումները նորից են շարունակվում, որոնց արդյունքը 1938-ի գարնանը լույս տեսած հոդվածներն էին՝ սերտորեն կապված Վերֆելի վեպի ու հարակից հարցերի հետ, որ ապագա գրքի առանցքն էին լինելու:

Մեծ եղեռնի տարելիցի առթիվ մտորումները բաժանելով «Հերկ» ասագրի ընթերցողների հետ (1938, ապրիլ), Լ. Կ. Պալճյանը ասում էր. «Այսօր մեր աչքերուն առջև կուրվագծվի «Մուսա լեռը»... Մենք հոն ենք: Այո՛, հոն ենք բոլորս: Մեր կյանքը՝ քառասուն օրերն են... Իրոք, ի՞նչ տարբերություն... Մենք ալ ձգած մեր բնավայրը, հավաքված հոս լեռան մը վրա, ուր պետք է կազմակերպենք ինքնապաշտպանությունը: Լեռան վրա ենք: Կը պայքարինք»: Այսուհետև վերադառնալով վեպի դրական ու բացասական կերպարներին՝ դավալիթներին, զավոդներին, դավողներին, վախկոտներին, նաև կոպողներին, գողվողներին, նվիրվածներին, վերջապես ամենատիպական կերպարին Տեր Հայկազունին, միտքն եզրափակում է մի

խորհմաստ կոչով՝ կապված Եկեղեցու վճռական դերի հետ սփյուռքահայության կյանքի կազմակերպման մեջ: «Տեր Հայկազունի ձայնը երկրորդ Մովսեսի մը նման կը գոռա՝ միաբանություն, կարգապահություն, կազմակերպություն... Օ՛հ, ո՛ր ես դուն, Տեր Հայկազուն... Ձայնդ կը լսենք» («Հերկ», Ա տարի, թիվ 11, էջ 1):

Պակաս ուշագրավ չէ Լ. Կ. Պալճյանի երկրորդ հոդվածը՝ լույս տեսած մեկ ամիս անց, դարձյալ նույն հանդեսում (1938, մայիս), ուր սթափ ու իրատես հայեցությամբ նժարվում են Հայաստանի Հանրապետության վերելքի ու անկման պատճառները՝ ներքող չկարդալով կամ ցեխ չշարտելով ո՛չ նրա ստեղծողների ու առաջին վարիչների, ո՛չ էլ նույնիսկ «ժառանգորդների» հասցեին, որպիսի առաքինություն ժամանակին չունեցանք մենք՝ այս գիտական կանառի աստիճանավոր ու տիտղոսավոր աշխատավորներս, մինչ հայ ժողովրդի և գրականության ակադեմիական պատմությունների մեջ գնահատում էինք 1918—20 թթ. և հետագա տասնամյակների անցքերը:

«Այսօր վեր կենալ ու հայհոյել թուրքին, որովհետև հարձակվեցավ Հայաստանի վրա, հայհոյել ռուսին, որ չպաշտպանեց Հայաստանի անկախ հանրապետությունը, հայհոյել դաշնակիցներուն, որովհետև օգնության չհասան հայերուն, անիծել մեր ճակատագիրը կամ հանցավորներ ու պատասխանատուներ փնտռել հայ ղեկավարներու մեջ, առնվազն միամիտի գործ է: Պետք չէ կորսնցնենք իրատեսության զգացումը»,—զգուշացնում էր ժամանակակիցներին հրապարակախոս Կ. Պալճյանը և համբերությամբ բացատրում, թե ինչու, այնուամենայնիվ, կործանվեց Հայաստանը.

«Թուրքը հարձակվեցավ, որովհետև մեր դարավոր թշնամին էր և կուգեր վերապրող հայության դիակներու վրայով իր ճամփան բանալ դեպի Ատրպեյճան ու թուրանական ժողովուրդները: Խ. Ռուսաստանը չօգնեց Հայ Հանրապետության, որովհետև ստիպված էր թուրքին բարեկամությունը պահել, ան կրցավ մնացած հայության միայն ֆիզիկական գոյությունը փրկել՝ գրավելով ու զոհելով հայ պետության անկախությունը: Անգլիա, Ֆրանսա չմիջամտեցին ու լռեցին, որովհետև շահ ունեին Թուրքիան սիրաշահելու՝ տնտեսական և քաղաքական նկատառումներով»:

Այստեղից մի հետևություն կարելի է անել, և այդ մասին իր կարծիքը չի զլանում հայտնել հետագոտողը. «Այս պայմաններուն մեջ միայն բիրտ ուժը կրնար փրկել հայ պետությունը: Իսկ Հայաստանը այդ ուժը չունեիր» («Հերկ», Ա տարի, թիվ 12, էջ 2): Վաղ թե ուշ ժողովուրդը կվերագտնի այդ ուժը, իսկ մինչ այդ պետք է զինվի հոգեպես՝ «պատմության ոգիով ու խորհուրդով» (ն. տ., էջ 3) և սպասել իր ժամին, իր պահին, որոնք «ազգեր կը ստեղծեն»: Արդյոք նույն ուժի, նույն պահի թելադրանքով չէ՞, որ պիտի լուծվի այսօր Արցախյան հարցը:

Լ. Կ. Պալճյանի աշխատության մեջ Ֆ. Վերֆելի վեպն արժեքավորված է նախ և առաջ իբրև գեղարվեստի արտահայտություն, որը ոչինչ ընդհանուր չունի սովորական բարոյախոսական ու մարդասիրական շարադրությունների հետ: Նրա հեղինակը հասու է արվեստի «հավիտենական կենդանության» գաղտնիքներին և կարողանում է իր հանճարով անմահացնել հայ ժողովրդի ողբերգության մեկ պահը, ընկալելով այս վերջինը որպես «մարդկային բարձր արժեք ներկայացնող համաշխարհային երևույթ»: Բայց պակաս կարևոր չէ նաև այն, որ Վերֆելի վեպի մեջ «նույնքան արժեք կը ներկայացնե թուրքը, ինչքան հայը»: Ավելին, այդ առումով այն մերձեցնում

է շեքսպիրյան ողբերգություններին, ուր «Օթելլոն Օթելլո չէ և չի կրնար ըլլալ առանց Յակոյի»:

Այս ոգով քննելով վեպը՝ Լ. Կ. Պալմյանը նկատում է այնուհետև, որ «Մուսա լերան քառասուն օրերի» մեջ «Հայը հայ է, որովհետև նախատագիրը անոր դեմ հաներ է թուրքը՝ մեկը ընելով նահատակ <և> մյուսը՝ նահատակող, և սակայն, երկուքն ալ հավասարապես խաղալիքներ են իրենց նախատագրին ձեռքը: Երկուքն ալ հավասարապես մարդեր են, որոնք իրենց վիճակված ձևով կը տառապին» («Մուսա լերան հայերը», վերանայված հրատ., էջ 7):

Եզրափակիչ խոսքերը վերստին Շեքսպիրի աշխարհի կրակներից են առնված, որոնք ծավալվելով՝ վերածվում են վիթխարի խարույկի ու իրենց մեջ են առնում ողջ Հայաստան աշխարհը.

«Վեպին աշխարհը դժոխք մըն է, ուր մարդիկ կը տանջվին: Հայը կը փրկվի, սակայն, մեռնելով, իսկ թուրքը մեռնիլ ալ չի կրնար:

Վեպի մեջ հայն ու թուրքը մարդկային հոգիներու երկու բևեռներ են: Հեղինակը կրցած է հասնիլ այս բևեռներուն, թափանցած է էության ու տրված անոնց հոգիները իրենց խոր իսկությամբ» (ն. տ., 7—8):

Այսպես գրելու համար ոչ միայն պետք էր ունենալ գեղագիտական բարձր ճաշակ, գրականագիտական բազմակողմանի ու հարուստ գիտելիքներ, արվեստի խնդիրները ճիշտ ըմբռնելու և մեկնելու բնատուր կարողություն, այլև քաղաքացիական արիություն և համարձակություն, որովհետև մեր կյանքի ու պատմության այս ցավոտ հիշողություններն, այն էլ 30-ական թթ. վերջերին, ամենագլխաւոր հիշատակողին անգամ կարող էին շեղել բանականության շավղից:

Կարևոր մյուս խնդիրը, կամ խնդիրներից մասնավորապես մեկը, որ, հեղինակի կարծիքով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, գրված խավոր հերոսի ընտրության հարցն է: Ինչպես երևում է, մի ժամանակ Լ. Կ. Պալմյանն ենթադրել է, թե այդ կերպարը Տեր Հայկազունն է: Բայց բուն վեպի հետագա քննության ընթացքում նա հիմնովին (և իրավացիորեն) փոխում է տեսակետը և կանգ է առնում Գաբրիել Բագրատյանի վրա (էջ 18), ուշադրություն հրավիրելով միաժամանակ, որ Վերֆելը Մուսա լեռան հայության ինքնապաշտպանությունը կազմակերպող հերոսին որոնել է ո՛չ թե Մայր երկրում, այլ գաղթահայության մեջ, հետո էլ անելով մի այսպիսի շեղում.

«Արդյոք պիտի կարենա՞նք ըսել, թե Ֆրանց Վերֆելն ալ իրականությունը կը կանխե իր վեպին մեջ՝ ստեղծելով այն գաղութահայերը, որոնք իրապես պիտի ծլին մեր գաղութներուն մեջ և պիտի ծաղկին ու պտուղ տան հայրենի հողին վրա: Պիտի ծնի՞ն արդյոք իրական Գաբրիել Բագրատյաններ, Ավագյաններ ու Ստեփաններ, որոնք անոնց ձևով կամ այլ ձևերով կարենան ստեղծել իրենց նախահայրերու աշխարհին մեջ կյանքի և արժեքներու նոր կոթողներ՝ ի փառս հայ հոգիին և պատմության» (էջ 51—52):

Այս բաղձանքի մեջ անբնական ու անիրականանալի ոչինչ չկա, ավելի ճիշտ՝ Վեհափառ Հայրապետը, դեռ աշխարհական ուսուցիչ, կանխատեսում էր հայոց պետականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գալիքը, երբ վերջիններիս ղեկը սփյուռքահայերի ձեռքին էր լինելու, ուստի ուսուցչի ու դաստիարակի իր կոչումից ելնելով՝ զգուշացնում ու զգաստացնում էր սփյուռքի հոծ հայությանը՝ ընթանալ առողջ բանականության ճա-

նապարհով, առանց պարփակվելու սեփական պատշաճի մեջ կամ կամովին մեկուսանալու, որոնք վտանգավոր են նույնքան, ինչքան և օտարացմանն ընդառաջ վազելու կույր մղումը.

«Շրջապատեն բացարձակ մեկուսացումը, կյանքի արտաքին աղբյուրներն կամովին զրկվիլը անխուսափելիորեն կը տանին դեպի այլասերում», հետևաբար առողջ ճամփան ո՛չ թե մեկուսացման մեջ է, այլ «եվրոպական մշակույթին, իսկական մշակույթին հաղորդակցվելու մեջ»: «Ծշմարիտ մշակույթը,—շարունակում է Լ. Կ. Պալմյանը,—չօտարացներ, այլ, ընդհակառակը, կը զորացնե քու մշակույթդ: Ան կը մոտեցնե մեզ մեր ազգային, սեփական, մնայուն արժեքներուն: Եթե հայը իր ազգային արժեքներով զինված՝ ծանոթանա Արևմուտքի մշակույթի հրաշալիքներուն ու գնահատել գիտնազանոնք, չի կրնար չսիրել ու չհպարտանալ հայ մշակույթի հրաշալիքներով» (էջ 54):

Վերֆելի վեպն աշխարհ գալով Արևմուտքում՝ ըստ ամենայնի փոթորկեց եվրոպական և ամերիկյան իրականությունները և սփյուռքահայությանը, բայց փակի տակ ու, գրեթե, անծանոթ մնաց բուն Հայաստանում. այստեղ ընդունված չէր հիշել ու խոսել Մեծ եղեռնի տարիների դեպքերի ու դեմքերի, այդ կյանքն արտացոլող գրական ստեղծագործությունների մասին, մի կողմ թողնելով ազատագրական պայքարի գործիչների ու նրանց համակիրների նկատմամբ գործադրվող բռնություններն ու հալածանքները... Մայր Հայրենիքում, բնականաբար, նույն ճակատագրին էին արժանանում նաև Վերֆելի վեպի մասին գրված գրքերը նույնպես, ներկա դեպքում՝ Լ. Կ. Պալմյանի սույն աշխատությունը: Ահա՛ ինչու, երբ այն փոքր տպաքանակով ու վերանայված տարբերակով 1986-ին բազմացվեց, իսկ 1987-ին միաժամանակ ֆրանսերեն ու ռուսերեն թարգմանություններով լույս տեսավ Փարիզում և Մոսկվայում (վերջինը՝ «Դրուժբա Նարոդով» ամսագրի մեջ, 1987, № 8), իսկական հայտնություն դարձավ: Ռուս գրական շրջանները անվերապահ բարձր կարծիք հայտնեցին Վեհափառի այս աշխատության մասին:

Մուսա լերան դասերի սթափ նժարմամբ՝ հետազոտող-իմաստասերն ինչպես ավելի քան կես դար առաջ, այնպես էլ այսօր, օգնում է սերունդներին նորօրյա իրադրությունների մեջ ճիշտ կողմնորոշվելու հանուն ազգության վերածնության, արդարության վերահաստատման, հանուն հայի ազգային դիմագծի պահպանման, հանուն կորցրած հայրենիքի փրկության ուղիների տեղագիտական որոնումների՝ վառ պահելով բոլորի էլ հավատն ու հույսերը, և բոլորին էլ ոգեկոչելով իմաստուն ու գեղեցիկ կերպով ապրելու այս կյանքը, յորովսանն նպաստելու մեր ազգի պատմական մեծ առաքելությանն ու հոգևոր հաղթանակներին համաշխարհային քաղաքակրթության մեջ:

«Ազգ մը չապրիր միայն իր նյութական բարիքներով,—բացատրում է Լ. Կ. Պալմյանը,—չապրիր միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես են արվեստներն ու գրականությունը, չապրիր միայն հանճարեղ անհատներու գործերով, այլ կապրի նաև իր պատվի ու արժանապատվության զգացումներով, իր «Մենք»-ի գիտակցությամբ ու զոհաբերության ոգիով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մեկ խոսքով՝ իր բուրյակն անարագրով» (ն. տ., 60):

Ֆ. Վերֆելի անմահացրած հերոսները հենց այդպիսի մարդիկ էին, ոչ թե խեղված, այլ «հարազատ հայեր», որոնք իրենց մեջ կրում էին «հայ ժո-

ղովրդի բարոյական դիմագիծը՝ տոկուն, առողջ, վեհ և գեղեցիկ», ընդունակ՝ հետևորդների մեջ զարթնեցնելու նոր իդեալներ և սովորեցնելու, որ դժբախտությունից ու մարտիրոսությունից բացի, որոնք հայ ժողովրդի մշտական ուղեկիցներն են եղել դարերի հոլովույթի մեջ, հայն ունեցել է իրենից անբաժան մեկ այլ ճակատագիր նույնպես՝ տոկալու, հաղթելու և ապրելու ճակատագիրը, ստեղծագործելու և հավերժ գոյատևելու անմար կրակն ու ձգտումը: Կարծես հայերի մասին ասված լինի ավստրիացի մեծ քերթող Ռ. Մ. Ռիլքեի թեավոր խոսքը. «Այն ո՞վ է, որ հաղթանակների մասին է խոսում, քաջությունը դիմանալն է...» („Wer spricht von Siegen? Überstehn ist alles“ — „Requiem“, 1908):

4

Երրորդ աշխատության հրապարակ գալու տարեթիվը ինչ-որ չափով հոբելյանական էր: Եթե հիշենք, որ Լ. Կ. Պալճյանի առաջին հոդվածներն սկսել են լույս տեսնել 1933-ի մարտից, Փարիզի «Մարտկոց» օրաթերթի էջերում, իսկ խնդրո առարկա գրքի տպագրությունն արտոնվել է 1943-ի ապրիլին, ապա ճիշտ որ այդ տարի լրանում էր նրա հրապարակախոսական-գիտահետազոտական գործունեության տասնամյակը՝ նախանձելի իր արգասավորությամբ, մի կողմ թողած, որ գրքի հառաջաբանը թվագրված է «1942, սեպտեմբեր, Պուքրեշ», իսկ վերջինից ելնելով՝ անհիմն չի լինի կարծել, որ այս լուրջ ու ծավալուն հետազոտությունը պատրաստվել է ինչպես նույն թվականի նախորդ ամիսներին, այնպես էլ ավելի վաղ, մեկ կամ երկու տարիների ընթացքում, իսկ մտահղացումը գուցե և գալիս էր համալսարանական ուսումնառության օրերից:

Խորագիրը խիստ առարկայական է. «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ»: Ըստ որում՝ եթե հեղինակի նախորդ երկու աշխատությունները կոչված էին օգնելու ընթերցողին ճիշտ պատկերացնելու իմաստասիրական և պատմա-գեղագիտական մի քանի խնդիրներ՝ կապված հայ մարդու, առավելապես սփյուռքահայության բնավորության ու հոգեբանության և նրա նորագույն պատմության մեջ կատարված ճակատագրական ու ողբերգական փոփոխությունների հետ, ապա նոր գրքի նյութը հողի ու ժողովրդի, մարդու ու բնության, բնաշխարհի ու ազգության անխզելի կապի, իրական ուսուցչի և դաստիարակության բովանդակության հարցերն էին: Լ. Կ. Պալճյանն առավելապես խորհել ու խոսել է տալիս անմահ Հայրիկին՝ իրեն վերապահելով միայն եզրահանգումները: Առատ են այս աշխատության մեջ Խրիմյանի տարբեր երկերից արված կարճ ու ընդարձակ մեջբերումները: Հետազոտողը, կարծես, սրբապղծություն է համարում վերաշարադրել այդ բացառիկ անձնավորության ու մեծ անհատականության խրատներն ու խորհրդածությունները, փոխել նրա բառն ու բանը, նրա խոսքի բնական հոսքն ու կշռույթը:

Եվ այսպես՝ ազգության գոյատևման և բարոյական դաստիարակության, հայ ժողովրդի ազգային բնավորության հատկանշական գծերի բացահայտման բուն ձգտումը, տարիների անհագ հարցասիրությունը 30-ական թթ. վերջերին Լ. Կ. Պալճյանին հանդիպադրեցին Խրիմյան Հայրիկի լեզունդներով պարուրված կերպարին և մայր ժողովրդին կտակված գրական վիթխարի ժառանգությանը, որոնց բուն էության մեջ սցենարն էլ դյուրին չէր միանգամից թափանցել:

Երբ մեր հեղինակն աշխարհ եկավ (1908, սեպտեմբեր 20), Խրիմյանն այլևս կենդանի չէր (վախճանվել էր 1907-ի հոկտեմբերին), բայց շարունակվում էր նրա ազդեցությունը մեր հոգևոր կյանքի ու ազատագրական պայքարի վրա, որպես անգրեն պատգամ շարունակում էին հնչել նրա խրատներն ու խորհուրդները՝ առմիշտ հրաժարվել ողբերից ու աղերսագրերից և ապավինել սեփական բազկի ուժին ու սրին: Այո՛, այս ամենին Լ. Կ. Պալանյանը տեղյակ էր բանավոր զրույցներից, բայց նրա համար իսկական հայտնությունն դարձավ Վասպուրականի Արծվի բարոյագիտությունը՝ կրթական ու լուսավորական ծրագրերն իրենց անհասանելի խորքով ու տարածման ընդարձակ շառավիղներով, որոնք անուղղակիորեն արձագանքում, իսկ որոշ դեպքերում էլ ավելի առաջ էին անցնում եվրոպական լուսավորիչների նմանօրինակ հայեցողություններից, հակառակ որ Խրիմյանն իրական կյանքում հնարավորություն ու ժամանակ չէր ունեցել ուսումնասիրելու նրանց երկասիրությունները և առաջնորդվել էր լոկ իր առողջ բնագրով, իր զարմանալի ներքնատեսությամբ:

Հանգամանորեն քննելով Խրիմյան Հայրիկի ըմբռնումներն ու հայացքները ընդհանուր և ազգային կրթության և դաստիարակության, մարդու կոչման և անհատի կատարելագործման, համայնքի ու ընկերային կյանքի, ընտանիքի ու դպրոցի, գիտության ու տնտեսության, բնության ու աշխատանքի, ազգի ու բնաշխարհի, հողի ու մարդու անխզելի կապի և ածանցյալ այլ խնդիրների մասին, անհրաժեշտության դեպքում զուգորդելով դրանք մեր հոգևոր ու քաղաքական զարգացման պատմության և անձամբ իր՝ Հայրիկի վարչական ու քաղաքական գործունեության կարևորագույն փուլերի և կենսական ու անհետաձգելի հարցերին տված լուծումների հետ, հեղինակը գալիս է այն ուշագրավ եզրահանգմանը, որ Խրիմյան Հայրիկը ոչ թե սովորական կրթական, վարչական ու քաղաքական գործիչ է եղել, «այլ հեղափոխական մը՝ իր ավելի լրիվ իմաստով, իր ամբողջական իմաստով», ընդվզող ու բողոքող անհատականություն, որն երազել ու մտածել, ձեռնարկել ու աշխատել է վերականգնելու և վերանորոգելու համար հայ ժողովրդին և հեղաշրջելու նրա տնտեսական, ընկերային, քաղաքական ու բարոյական կյանքը՝ «գիտության ու սիրո ուժով, իսկական մեծ դաստիարակի մը ոգիով» (տե՛ս «Գալիքի տեսիլքով», էջ 82): Հետևաբար, բնավ չափազանցություն չի լինի, եթե Խրիմյանը հռչակվի «մեծագույն դաստիարակներեն մին» ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային չափանիշներով, որը «իր մեծ գաղափարներով ու ոգիով... միշտ կրնա իբրև ուղեցույց ծառայել որևէ ժողովրդական դաստիարակության՝ պատշաճելով ընկերային-տնտեսական նորագույն պայմաններուն» (ն. տ., էջ 86, 187):

Խրիմյանը միայն կյանքի ու մտածողության հեղաշրջող, ավելի ճիշտ՝ պահպանողական-հեղափոխական չէր, այլ գրչի մարդ ու մուսանների բարեկամ՝ սնունդ առած հայկական ու համաշխարհային կլասիցիզմի ու ռոմանտիզմի ակունքներից, բայց առօրյայում ավելի իրատես ու շրջահայաց, քան հայ իրապաշտներից շատերը: Այս անսովոր մարդու մեծ կրծքում բաբախում էր մի մեծ սիրտ, որի գորովալից շունչն ու տազնապալից զարկերն զգացվում էին տասնամյակների հեռավորությունից, մասնավորապես հայրենի կարոտով ու հայրենադարձության ձգտումով հազարավոր հայերի շրջանում: Խրիմյանի բանաստեղծական հանճարի զարմանահրաշ կարողությունների մասին նուրբ դիտողություն ունի նաև Լ. Կ. Պալանյանը:

«Խրիմյան կը մտածե միաժամանակ մտքով ու սրտով, ու կը խոսի բանաստեղծի զգայնությամբ՝ պատկերներով ու գույներով և առաքյալի շունչով», — եզրակացնում է նա («Գալիլիի տեսիլքով», էջ 87):

Խրիմյանին նվիրված ազգային և օտար գրականությունը հարուստ չէ, մի քանի գրքույկ ու հոդված միայն: Վեհափառ Հայրապետի Երիտասարդական տարիներին գրած սույն հետազոտությունը հայրենի խրիմյանագիտության հիմնաքարերից մեկն է և անկրկնելի՝ բոլոր առումներով:

Իր այժմեականությունը պահպանում է Լ. Կ. Պալճյանի եզրահանգումների մեծ մասը, հատկապես «Հողի սեր» գլուխը իր վերլուծական դրվագներով, որ, կարծես, դառն կշտամբանք լինեն հողից ու բնաշխարհից օրավուր խորթացող մեր ժամանակակիցների համար ևս: Թարգմանը հանդիսանալով Խրիմյան Հայրիկի մտածումներին՝ Լ. Կ. Պալճյանն ասում է.

«Հողը... կենդանի իրականություն մըն է, մարմին և շունչ ունի, կը խոսի ու կը շարժի: Հողը կապրի ու կրնա և մեռնիլ: Հողը կյանքի աղբյուր է, ուրկե կը ծնին ցորեն ու պտուղ, ուրկե կը հոսին մեղր ու կաթ: Հողը մարդկային կյանքի ալ արգանդն է, հոն կը թաղվին մարդիկ՝ հոնկե ալ ծնելու համար» (էջ 163): Բայց հող ասելով՝ Խրիմյանը չի հասկանում ինչ-որ անորոշ բան, այլ **հայրենի հողը՝ «իր գյուղին, իր համայնքին հողը»**, այն հողը, որ հայ մարդու ծննդավայրն է, «որոշ պատկերով, որոշ աշխարհագրական դիրքով, որոշ բուսականությամբ, որոշ ծաղիկներով ու կենդանիներով, որոշ հարստություններով, որոշ աշխատության ու արտադրության ձևերով, որոշ սովորություններով, երգերով, գավառաբարբառով, որոշ անցյալով, որոշ ուրախություններով ու ցավերով» (էջ 164):

Ի վերջո՝ հայ շինականի հայրենիքը հենց այդ հողն է, որին պետք է նա կապված մնա իր զգացմունքների բոլոր ուժով, իր կյանքով, հավիտենապես:

«Եվ Խրիմյան իր խոսքով ու գրչով կուզե հայուն զգացնել տալ հողին կենդանությունը, հողին զարկը, հողին արժեքը, հողին անմահությունը» և «ամեն գնով ու բոլոր միջոցներով կը պայքարի այն հայկական դրժբախտության դեմ, որ պանդխտություն կը կոչվի»: Բնավ ուշացած չէ, անգամ մայր հարենիքում ապրողներին համար, ունկնդրելու Խրիմյանի խորհմաստ և փրկարար պատգամները, որոնց վրա ուշադրություն է հրավիրում նաև հետազոտողը՝ քաղելով նրա հայրապետական առաջին կոնդակից (1893 թ.):

«Ողջո՛ւյն ձեզ, բնակիչք դաշտաց և լեռանց, շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրեք զհողն և ման, զոչխարն և տավար. դուք աշխարհի բարի և անխարդախ վաստակին աշխատավոր մշակն եք, դուք հարազատ որդիք եք նախահոր մերում. գործեցե՛ք զերկիր և պահեցե՛ք՝ գիտնալով թե միայն երկիրն է ձեզ կյանք և զորություն. միշտ ջանացեք անկորուստ պահել այդ հայրենատուր ժառանգություն» (էջ 168):

5

1943-ին, ասացինք, փոխվեցին Լ. Կ. Պալճյանի կյանքի ուղին, ամենօրյա հոգսերն ու տագնապները: Թեև հիմա էլ (1943, սեպտ. 30) վարդապետ, իսկ հետո եպիսկոպոս (1951, հուլիս 8) Վազգեն Պալճյանը չի դադարեցնում իր գրականագիտական-հրապարակախոսական գործունեու-

թյունը, սակայն արծարծվող խնդիրները գերազանցապես կապված են կրոնա-եկեղեցական աշխարհի հետ: Այնուամենայնիվ, նրա գրիչը վերստին ստեղծել է վառ ու ինքնատիպ երկեր, թերևս, առավել հասուն, որոնց ամենավառ արտահայտությունը «Մեր պատարագը» գիրքն է՝ լույս տեսած 1945-ին: Բնույթով այն վերլուծական-մեկնողական աշխատություն է և եկեղեցական մատենագրության երբեմնի ժանրերից մեկի վերածննդի փորձ՝ արդեն նոր պայմաններում ու սկզբունքներով:

Պատարագի հին մեկնությունները խրթնաբան աշխատություններ էին՝ իրենք իսկ կարոտ կրկին մեկնության: Միջին դարերից մեզ են հասել Գրիգոր Նարեկացու հոր, Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսի (X դար), Ներսես Լամբրոնացու (XII դար), իսկ փոքր-ինչ ուշ՝ Հովհաննես Արճիշեցու մեկնությունները: Այս վերջինը նաև երկու անգամ տպագրվել է XVIII դարում և տարբեր խորագրերով. «Մաղթանք ձեռննությունեան առ կոյսն Երանուհի» (Կ. Պոլիս, 1717) և «Մեկնութիւն ահաւոր Խորհրդոյ Սրբոյ Պատարագին» (Կ. Պոլիս, 1799)****:

Վեհափառ Հայրապետն ստեղծագործական ազդակ է ստացել XIV դարի հեղինակ Հովհաննես Արճիշեցու այս մեկնության հառաջաբանից՝ ձեռքի տակ ունենալով նրա 1799 թ. հրատարակությունը:

«... Հավատացյալները անտարբեր են Սուրբ Գրոց հանդեպ կամ կրկարդան, բայց կարդացածներուն միտքը չեն քններ և կամ բնավ իսկ չեն հասկնար» («Մեր պատարագը», էջ 2):

Սրանք իրողություններ էին, որ եկեղեցի մտնելու և, որպես հոգևոր հովիվ, հավատացյալների հետ շփվելու առաջին օրերից մտահոգում էին Վազգեն վարդապետին՝ պարտադրելով վիճակը գեթ մասամբ փոխելու համար կրթական-լուսավորական, ավելի ճիշտ՝ հոգևոր կրթության և լուսավորության հարցերով զբաղվելու, որպես առաջին քայլ պատրաստելով մեկնությունը հայոց պատարագի, որի նշանակությունը անչափ կարևոր էր վերջինին առնչվող դավանաբանական և ծիսագիտական որոշ խորհուրդներն ու հարցերը ճիշտ պատկերացնելու, իսկ վիճահարույց դառնալու դեպքում՝ ճշմարիտ լուծումներ գտնելու համար:

Եվ, հիրավի, Վեհափառ Հայրապետի սույն աշխատության մեջ ընթերցողը գտնում է ընդհանրապես քրիստոնյա աշխարհի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու խորհուրդներից ու արարողություններից մեծագույնի՝ Սուրբ Պատարագի կարգի ու ընթացքի դյուրըմբռնելի, բացատրությունը՝ հարկ եղած դեպքում շտկապելով դրանք մեր Եկեղեցու դավանաբանական սկզբունքների և ազգային ավանդների, մեր ժողովրդի կրոնական զգացումների հետ: Եվ ամեն անգամ՝ հստակ ու խորիմաստ լուսաբանություններով: Հեղինակն ուսուցանում է, որ թեպետև կրոնական զգացումն իր խորքի մեջ ազգային բնույթ չունի, սակայն իր պատմական զարգացման մեջ ձեռք է բերում տվյալ ժողովրդի, ներկա դեպքում՝ հայ ժողովրդի պատմական ճակատագրով պայմանավորված ուրույն ձևեր ու երանգներ, որոնք իրենց որոշակի դրոշմն են թողնում հայ մարդու հոգեկան կերտվածքի ու բնավորության վրա՝ միշտ ու ամենուր կանգնեցնելով

**** Հայտնի է նաև անանուն հեղինակի 1759-ին Զմյուռնիայում) «Գիրք մեկնութեան, ընդ որում պարունակի պաշտօն Աստուածային անպատում պարգևացն») և 1795-ին Կ. Պոլսում տպված աշխատությունը (արդեն «Մեկնութիւն ժամակարգութեան»), բայց վերջինս ավելի համատարած և անհաշող գրվածք է:

նրան խղճի դատաստանի առջև, պարտադրելով անկեղծորեն քննել երկրային կյանքում իր կատարած բարի ու չար գործերը և ձգտելու բարուն ու կատարյալին, որովհետև իսկական բարոյական հերոսությունը բացարձակ անկեղծության մեջ է (տե՛ս էջ 9—10, 18):

Համակողմանիորեն քննելով ապաշխարության, մեղքերի քավության և ինքնակատարելագործման հնարավոր ուղիները, որոնց ընթացքում շատերը՝ սարսափած իրենց իսկ գործած մեղքերից, փախում են մահվան գաղափարին ու հանցափորձության, հայոց պատարագի այս խորատենչ Մեկնիչն իր ծանրակշիռ առարկություններն է մեջտեղ բերում, հայոց պատարագի բուն խորհրդից բխող կենսահաստատ հետևություններ անում: «Մահը պատիժ մը չի կրնար ըլլալ,—ասում է նա,—այլ՝ պատիժն փախուստ մը, իսկ անձնապանությունը ո՛չ թե հերոսություն է, այլ՝ տկարություն, դասալքություն: Իսկական հերոսությունը ապրիլն է, և մեղքերն և սխալներն իսկապես ազատվելու միակ ճանապարհը բարի գործքով զանոնք հատուցանելը... աշխարհի չարը բարիի վերածելը»: Իրապաշտ ու վեհ են հնչում Վեհափառ Հայրապետի եզրափակիչ խոսքերը. «Միայն բարի ու արդար գործի ու ստեղծագործ, շինարար աշխատանքի ճամբուն վրա է, որ մարդը պահ մը գոնե կը զգա արարչական ուժերու զարթնումը իր մեջ» (էջ 20—21):

Մենք գրեթե չծանրացանք բուն աշխատության կամ գրքի երկրորդ մասի վրա, որ հենց հայոց պատարագի մեկնությունն է և ուր, զուգահեռաբար, քննության են առնված կրոնական-եկեղեցական ծեսերին ու արարողություններին առնչվող հարցեր՝ թեա՞ծելով նաև տեսական ոլորտ: Հեղինակի այդ դիտողություններից կարող են մեծապես շահել ոչ միայն հարցի նեղ մասնագետները, այլև, ընդհանրապես, ազգագրագետները՝ ժողովրդական ծեսերի ու սովորույթների մեջ բեկված հնագույն պաշտամունքների աղուտացած հետքերը պեղելու և ուսումնասիրելու ընթացքում:

Պատարագը, ներկա դեպքում՝ հայոց պատարագը, թեպետև ազգային հավատալիքների հետ կապված արարողություններից կամ ծեսերից համեմատաբար ամենաերիտասարդն է, ձևավորված լինելով Հայաստանում քրիստոնեության տարածման և պետական կրոն հռչակվելու առաջին դարերում և հետագայում էլ համեմատաբար քիչ փոփոխություններ կրած, բայց վերստին ունի խորհրդավոր ու անըմբռնելի գաղտնիքներ: Այդ գաղտնարանների դռները բաց անելու համար մենք, գրեթե ամենուր, հակված էինք նյութական, առարկայական ազդակներ որոնել, հնագույն առասպելներն ու պաշտամունքները, հավատալիքներն ու խորհրդապատկան իրողությունները անգրագետ ժողովրդի երևակայության մեջ բեկված՝ բնական ու հասարակական ուժերի արտացոլանք համարել, գլխովին անտեսելով **Ոգու** և **Հոգեկանի** մեծ խորհուրդը: Մինչդեռ Վեհի մեկնության մեջ կարդում ենք. «Եկեղեցիեն ներս ամեն բան խորհուրդ է, սիմբոլ է, ո՛չ քարը քար է, ո՛չ փայտը՝ փայտ, ո՛չ աղոթքը՝ լոկ խոսք, ո՛չ երաժրշտությունը՝ պարզ երգ, ո՛չ ալ Սուրբ Պատարագի հացն ու գինին՝ հաց ու գինի: Ով որ կարող չէ հոգեպես նյութական իրականությունեն անդին անցնիլ և անոնց խորհուրդը տեսնել, անոր համար բնական է, թե հացը հաց կը մնա, և գինին՝ գինի: Եվ, սակայն, մարդկային հոգեկան կյանքին հատուկ երևույթ մըն է նյութականեն աննյութական իրականությանց բարձրանալը, երևույթ, որ հատուկ է, մանավանդ, մարդկային մտավոր ու հոգևոր աշխարհին» (էջ 79):

Այս էլ չմոռնանք, որ «կրոնքը ինքը, իր էությունը և բովանդակությամբ, զուտ հոգևոր երևույթ մըն է՝ մարդկային անհատական ու ընկերային կյանքին հոգեկան <ու> բարոյական անհրաժեշտություններեն բխած» (էջ 80), հետևաբար կրոնի, ծիսակարգի հետ կապված հարցերը քննելիս ուշադրության առարկան նախ «հոգեկան երևույթները», «հոգեկան ու բարոյական անհրաժեշտությունները» պիտի լինեն: Որ այս գնահատականի մեջ բնավ չափազանցություն չկա, կուզեինք հիշեցնել տակավին Պլուտարքոսի «Յաղագս յորջորջման լերանց և գետոց» գրվածքի մեջ նկարագրված՝ հեթանոս հայերի մի ծես կամ արարողություն, դարձյալ կապված զոհաբերության կամ պատարագի հետ և տարածված քրիստոնեությունից շատ առաջ: Աղբյուր ունենալով Դորոթեոս Քաղդեացու երկը, Պլուտարքոսը հաղորդում է «թե Երասխի մոտ կար սև քար մը՝ սիքի՛ոն (վարունգ) կոչված: Երբ պատգամը մարդկային զոհ մը հրամայեր, երկու մատաղ կույսեր այդ քարը կը դնեին պահապան աստուծո բազինին վրա: Քուրմը հազիվ թե կը հպեր անոր իր դանակը, և ահա արյան ապաժույժ մը կը հոսեր անկե: Այս սնապաշտ արարողության ներկա գտնվողներն մեծ ճիշտ կը բառնային և քարը մեհյան կը տանեին» (Ե. Դուրյան, Մարդագոհ, տե՛ս «Անահիտ», 1947, № 2, էջ 15—16): Ծիշտ որ ամեն ինչ խորհրդանշական է այստեղ. և՛ կույսերը, և՛ քարը, և՛ արյունը, և՛ հայ հավաքականությունը շատ հին ժամանակներից կրոնական ծեսերին ու հավատալիքներին ինքնաբերաբար տալով նման գունավորում՝ հոգին մաքրում էր վաշտեցության և բարբարոսության արյունալի մեղքերից և որոշակի քալ կատարում դեպի «բարոյական անհրաժեշտության» գիտակցություն:

«Մեր պատարագի» եզրահանգումներն, իբրև թևավոր խոսքեր, նորովի վերաիմաստավորումներով, սեղմ կամ ծավալուն, ցրված են Վեհափառի այլևայլ գրությունների՝ քարոզների, կոնդակների ու 1976-ին հրատարակված «Մտածումների» մեջ: Նա ուշադրություն է հրավիրում հատկապես հայոց մշակութային բազմահուն կյանքի ու ազգային Եկեղեցու գործունեության միասնության, համագգային արժեքների անբաժանելիության վրա, որոնք ժողովուրդն ու Եկեղեցին պահել են կյանքով ու արյունով:

«Ծջմարիտ քրիստոնյա են այն ժողովուրդները,—ընդգծել է Վեհը,— որոնք դարերու փորձով ստեղծված են քրիստոնեական ինքնատիպ մշակույթ և իրենց ծոցեն ծնունդ են տված վավերական սուրբերու» («Կոնդակներ, քարոզներ», III, էջ 289): Հայաստանյայց Եկեղեցին հենց այդպիսին է, ըստ ամենայնի՝ ճիշտ չհասկացված օտարներից, որը սակայն ո՛չ թե արատ, այլ սուավելություն է. «Թո՛ղ չմեղադրվի մեր Եկեղեցին որպես ազգայնական, ո՛չ: Մենք պարզապես կուզենք ապրիլ իբրև ազգություն, այնպես, ինչպես մեզ ստեղծեր են Աստված և պատմությունը: Մենք պարզապես կուզենք ապրիլ մեր ուրույն հոգևոր կյանքի փորձառությամբ: Մենք պարզապես կուզենք ապրիլ մեր քրիստոնեական-ազգային մշակույթի արժեքներով» (էջ 295):

Վեհի մշտական հրավերներն ու հորդորները՝ ուղղված սիրելի ազգին, վեհացնող են, ոգեշունչ են և արարումների մղող. եզրափակենք մեր խոսքը միայն մեկը վերհիշելով.

«Ապրեցե՛ք և գոյատևեցե՛ք այնպես, ինչպես Աստված է ձեզ ստեղծեր, և այնպես, ինչպես մեր Եկեղեցին ու դարերն են կերտեր ձեզ և ոգեշնչեր: Մենք հոգի կրող և հոգի ստեղծող ազգ ենք: Մեր հոգիի հայելին մեր կրոնական հավատքն է, մեր ազգային մշակույթն է, աշխարհի կյանքով ապրելու

ու գործելու մեր ազատ կամքն է՝ աստվածակառույց Ս. Էջմիածնի օրհնության ներքև:

Հայ ըլլալ և հայ ապրիլ. ահա՛ աշխարհի հոգևոր-բարոյական գեղեցկություններեն մին» (էջ 292):

6

Ինչ-որ առումով ընդհանրություններ կան Վեհափառ Հայրապետի՝ Սփյուռքում հրատարակած առաջին և վերջին ուսումնասիրությունների մեջ: Ե՛վ մեկը, և՛ մյուսը գրված են օտար, ուսմին լեզվով, որը նա գիտեր մայրենուն հավասար (ի դեպ, Բուքրեշի հայոց «Միաաբյան-Քեսիմյան ազգային վարժարանում» աշխատելիս՝ նա երկար տարիներ ուսմին լեզու և գրականություն էր ավանդում): Ե՛վ մեկի, և՛ մյուսի առաջին ընթերցողները, նաև արժեքավորողները օտարներն էին: Մասնավորապես վերջինը սկզբնապես, որպես դասախոսություն, կարդացվել է Բուքրեշի հայոց Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում, ուսմին բարձրաստիճան հոգևորականների, հանրային ու մշակութային գործիչների և բազում հավատացյալների առջև, 1950 թ. դեկտեմբերի 10-ին, վերածնության դարաշրջանի հայ հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ծննդյան հազարամյակին նվիրված հանդեսում, ապա որոշ վերանայումներով՝ տպագրվել ուսմին կրոնական-գրական-հասարակական «Ortodoxia» հանդեսում (1955, հոկտ., էջ 166—181), արդեն խորագրված՝ «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը և գործը»: Վերլուծական սույն ակնարկի մեջ և նրան կից՝ ուսմին ընթերցողին էին ներկայացվում նաև տասներկու հատված «Մատյան ողբերգության» պոեմի տասնմեկ գլուխներից, աշխատասիրողի համարժեք թարգմանություններով****, իբրև ճաշակ Նարեկացու հանճարի փայլատակման և ստեղծագործական կարողությունների:

Նկատի ունենալով լսարանի կամ ապագա ընթերցողների իրազեկության չափը՝ աշխատության առաջին մասում ընդհանուր տեղեկություններ են հաղորդվում Հայոց պատմական կյանքի վայրուվերումների, հին ու միջնադարյան մշակույթի անցած ուղու և բանաստեղծի կյանքի ու գրական գործունեության մասին, հետո միայն սկսելով վերլուծել գլուխգործոցը՝ «Մատյան ողբերգության» պոեմը, որը աշխատասիրողի ընկալմամբ աղոթամատյան է՝ բառիս ամենախորունկ նշանակությամբ, որպես միստիկ կրոնավորի զգացմունքների արտահայտության ձևերից մեկը:

Աղոթքը, նկատում է Վեհը, ծնվում է «մարդկային սրտի իսկական ու անկեղծ ապրումներից, սավառնում դեպի անծայրածիր անսահմանություն, և այնտեղ, հեռուներում, տիեզերական անդրաշխարհի անհունության մեջ հանդիպում է մի Սրտի, որը սիրում է մեզ, և ապա վերադառնում ու նորից իջնում մեր հոգու մեջ՝ մխիթարական օրհնություն բերելով մեզ... Ո՛չ մի մոլեգին քամի չի կարող ցրել և ո՛չ մի ահեղ ալիք չի կարող խեղդել անկեղծ աղոթքի անմահ ոգին» («Գալիքի տեսիլքով», էջ 202—203):

Նարեկացու աղոթքը դավանաբանական խրթին բանաձևերի կաղապար չէ, ո՛չ էլ հավատացյալներին անգիր անել տալու համար հանձնարարվող

**** Առաջին անգամ ուսմիներեն թարգմանված այդ հատվածներն են՝ Բան Գգ, Դբ, ԺԲդ, ԼԱգ, ԽԱա, ԾԵբ և գ, ԾԶբ, ԿԶբ, ՀԱբ, ԶԱա և ԶԳբ:

աղերսանք՝ զուրկ ներքին կրակից ու կշռույթից: Այն ծնվում է հոգու խորքերում, որպես աղեկեղ հառաչանք ու ներքին խոսք, իսկ այնուհետև ծավալվելով՝ վերանում իրական բանաստեղծության և գեղարվեստի անգերազանց արտահայտության:

Նարեկացին ամենաշերմեռանդն է բոլոր ծանոթ Աղոթողներից, գիտակցելով իր արած ու չարած հանցանքները, իր ծանրագին մեղքերը, բայց և ճանաչելով Աստուծո անպարփակելի մեծությունը և անկեղծորեն փառաբանելով նրան՝ չի կորցնում հույսը, որ, այնուհանդերձ, արժանանալու է թողության: Հեղինակից չի տարբերվում նաև իր քնարական հերոսը, «մեղքերից կազմված մի մարդ, կերտված նորք, փխրուն նյութից, ընդամենը լի մի ոչնչություն, որ ենթակա է հողեղեն մարդու գործած բոլոր սխալներից և որն իր մեջ զգում է իր նման բյուրավորների գործած մեղքերը և խորապես տառապում դրա համար, ինչպե՞ս պիտի հանդգնի նայել Աստուծո երեսին»: Միմիայն իր երկրային մեղքերն ու թերությունները նկարագրելով ու ողբալով, դաժան ու անողոք անկեղծությամբ իր հոգին մերկացնելով համայն մարդկության առջև, զղջումի խարազանով անգթորեն ու անընդհատ իրեն գանակոծելով, որովհետև մեղքի բոլոր ճանապարհներին կարելի է թողություն գտնել, Աստուծո Սերը մարդկանց հանդեպ ի վերջո պիտի հաղթանակի, և թողություն ստացած մարդն, ի վերջո, պիտի միանա Աստուծո հետ (հմմտ. էջ 203):

* * *

1955-ից առ այսօր գիտահետազոտական նոր աշխատություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը գուցե և գրել կամ ուրվագծել է, բայց չի հրատարակել: Իսկ այն մտքերը, որոնց շուրջ առաջներում կարող էր ծավալվել, այժմ անասելի սեղմությամբ հանրության են մատուցվում բազում ելույթների ու հարցազրույցների ժամանակ, կոնդակների ու քարոզների միջոցով կամ էլ՝ գերխտացած մտածումների ձևով:

Դրանց ուսումնասիրությունը տևական գործ է, ո՛չ պակաս կարևոր՝ Վեհի բացառիկ անհատականության ճանաչման և սզգային կյանքի ու պատմության շատ հարցերում ճիշտ կողմնորոշում ունենալու համար, սակայն տվյալ խնդիրները դուրս են մեր ներկա ծրագրից:

